ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձոր, Տարոն-4, Էներգետիկների թաղամաս թիվ 4/բ բնակելի շենքի կիսակառույցի ավարտման նախագծահետազոտական աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի ապրիլի 15-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 պայմանագրում 2020 թվականի սեպտեմբերի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ տեղեկանքի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 ՀՀ կառավարության 06.08.2020թ N1316-Ն որոշում:

Փոփոխության նկարագրություն պայմանագրի գնի նվազեցում, վճարման ժամանակացույցի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում պայմանագրի 7.5 և 7.8 կետեր:

Պատվիրատու՝ ***ՀՀ քաղաքաշինության կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.04.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 պետական գնման պայմանագրի

ք. Երևան «11» սեպտեմբերի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.08.2020թ N 1316-Ն որոշումը և Կողմերի միջև ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձոր, Տարոն-4, Էներգետիկների թաղամաս թիվ 4/բ բնակելի շենքի կիսակառույցի ավարտման նախագծահետազոտական աշխատանքների կատարման համար 15.04.2020թ կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրում և պայմանագրի բոլոր հավելվածներում «9 400 000 (ինը միլիոն չորս հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «1 880 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար)» թվով և բառերով:

1.2 Պայմանագրի հավելված N2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջերից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կատարող՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան,Թումանյան 32/4
կառավարական տուն 3	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150002922490100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09809552
ՀՀ 900011030401	Տնօրեն՝
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Առաքելյան

Հավելված
15.04 2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 պայմանագրի
11 .09.2020թ. կնքված N1 համաձայնագրի

« Հավելված N 2
15.04. 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/8 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հերթով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձոր, Տարոն-4, Էներգետիկների թաղամաս թիվ 4/բ բնակելի շենքի կիսակառույցի ավարտման նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000	1 880 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով»:*

Պատվիրատու՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011030401
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող՝

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
ք. Երևան,Թումանյան 32/4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150002922490100
ՀՎՀՀ 09809552
Տնօրեն՝

Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.